

ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՈՒՆ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ




GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MONTRÉAL ՄԱՅՐ ՏԱՆԱՐ

ԿԻՐԱԿԻ 21 ՓԵՒՐՈՒՄ 2021

203

DIMANCHE, 21 Fevrier 2021

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
:stgregorychurch@gmail.co | www.saintgregory.ca

ԱՐՏԱՔՍՄԱՆ ԿԻՐԱԿԻ
L'EXPULSION

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԵ
ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԵՆ
12.1-13.10

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԵՆ
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ
5.17-48

Les lectures de la Bible d'aujourd'hui

Romains 12.1-13.10
Matthieu 5.17-48

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ԶՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Célébrant:
RÉV. PÈRE DAVID MARGARYAN
Prêtre Paroissial

Առաւօտեան ժամերգութիւն - Office Matines à	9:30-ին 9h30
Ս. Պատարագ- ուղիղ սփռում - La Sainte Messe – En direct à	10:30-ին 10h30
Հոգեհանգստեան յատուկ պաշտօն ուղիղ սփռում- ժամը - Spécial Office Réquiem - En direct à	12:00-ին 12h00

DIACRES – ACOLYTES

Organist: M Vahram Sargsyan
Choeur Gomitas

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՀՈՒՄԵԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԵՆ 12.1-13.10

ԱՍՏՈՒԾՈՅ ԵԱՐԱՅՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԿԵԱԼԵ

12 1 Արդ՝ կ'աղաչեմ ձեզի, եղբայրներ՛ր, Աստուծոյ ողորմութիւնովը, որ ձեր մարմինները ընծայէք կենդանի զոհ մը՝ սուրբ, Աստուծոյ հաճելի, որ է ձեր բանաւոր պաշտօնը: 2 Եւ մի՛ կերպարանիք այս աշխարհին կերպարանքովը, հապա ձեր մտքին նորոգութիւնովը նորոգուեցէ՛ք, որպէս զի քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը, որ բարի ու հաճելի եւ կատարեալ է: 3 Քանզի ինձի տրուած շնորհքով այս կ'ըսեմ ձեր մէջ եղող ամէն մէկուն, որ արժան եղածը մտածելէն աւելի բան չմտածէ, հապա զգաստ կենալ մտածէ հաւատքին չափովը, որ Աստուած ամէն մէկուն բաժնեց: 4 Կասն զի ինչպէս մէկ մարմնի մէջ շատ անդամներ ունինք ու այն բոլոր անդամները միեւնոյն գործը չունին, 5 Նոյնպէս մենք՝ շատուորներս՝ մէ՛կ մարմին ենք Քրիստոսով եւ ամէն մէկերնիս իրարու անդամներ ենք: 6 Ուստի մենք զանազան պարգեւներ ունենալով այն շնորհքին համեմատ որ մեզի տրուած է, եթէ մարգարեութիւն՝ հաւատքին չափովը գործածենք. 7 Եթէ սպասաւորութիւն՝ սպասաւորութեան մէջ ըլլանք. ան որ պիտի սորվեցնէ՝ սորվեցնելու ետեւէ ըլլայ. 8 Ան որ պիտի յորդորէ՝ յորդորելու ետեւէ, ան որ կը բաշխէ՝ պարզմտութեամբ թող ընէ, ան որ վերակացու է՝ ջանքով, ան որ կ'ողորմի՝ յօժարութեամբ. 9 Սերը առանց կեղծաւորութեան ըլլայ, չարէն զգուելով, բարիին յարելով: 10 Եղբայրսիրութեան մէջ իրարու գորովայից եղէ՛ք. պատուելու մէջ իրարմէ անցէ՛ք. 11 Չանքի մէջ թուկասիրտ մի՛ ըլլաք. Հոգիով բորբոքեցէ՛ք. Տերօջը ծառայեցէ՛ք. 12 Յոյսով ուրախ եղէ՛ք. նեղութեան մէջ համբերեցէ՛ք. ստեպ աղօթքի կեցէ՛ք. 13 Սուրբերուն պետքերուն հաղորդ եղէ՛ք. հիւրասիրութեան ետեւէ եղէ՛ք. 14 Ձեզ հալածողները օրհնեցէ՛ք եւ մի՛ անիծէք. 15 Ինդացողներուն հետ խնդացէ՛ք եւ լացողներուն հետ լացէ՛ք. 16 Իրարու վրայ միեւնոյն խորհուրդը ունեցէ՛ք. ամբարտաւանութիւն մի՛ ընէք, հապա խոնարհներուն հետ

խոնարհեցէ՛ք, ինքզինքնիդ իմաստունի տեղ մի՛ դնէք. 17 Չարութեան փոխարէն մէկո՛ւն չարութիւն մի՛ հատուցանէք. բոլոր մարդոց առջեւ բարի բաներ ընելու հոգ տարէ՛ք: 18 Որչափ կարելի է ձեզի՝ ամէն մարդու հետ խաղաղութիւն ունեցէ՛ք: 19 Սիրելիներ, վրեժխնդրութիւն մի՛ ընէք ձեր անձերուն համար, հապա բարկութեան տեղի տուէ՛ք. վասն զի գրուած է. «Վրեժխնդրութիւնը ի՛մս է, ե՛ս պիտի հատուցանեմ՝, կ'ըսէ Տէրը»: 20 Ուստի «եթէ քու թշնամիդ անօթեցեր է՝ հաց տուր անոր եւ եթէ ծարաւ է՝ ջուր տուր անոր. քանզի այս ընելով՝ անոր գլխուն վրայ կրակի կայծեր պիտի դիգես»: 21 Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիով յաղթէ՛ չարին:

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ Ի ԾԻՆԱԼՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

13 1 Ամէն մարդ իր վրայ եղած իշխանութիւններուն թող հնազանդի. վասն զի չկայ իշխանութիւն մը որ Աստուծմէ չըլլայ եւ անոնք որ կան՝ Աստուծմէ կարգուած են: 2 Ուրեմն ով որ իշխանութեան դէմ կը կենայ, Աստուծոյ հրամանին դէմ կը կենայ եւ անոնք որ դէմ կը կենան, անձերնուն դատապարտութիւն կ'ընդունին: 3 Վասն զի իշխանները բարիք գործողները չեն վախցներ, հապա՝ չարը: Կ'ուզե՞ս չվախնալ իշխանութենէն, բարիք գործէ ու անկէ գովութիւն պիտի ընդունիս. 4 Վասն զի անիկա Աստուծոյ սպասաւորն է քեզի բարիի համար. բայց եթէ չարիք գործես՝ վախցի՛ր. վասն զի դատարկ տեղ մեջքը թուր չէ կապեր, քանզի Աստուծոյ սպասաւորն է եւ վրեժխնդիր՝ բարկութիւն հասցնելու անոր վրայ որ չարիք կը գործէ: 5 Ասոր համար պետք է հնազանդ ըլլայ, ոչ միայն բարկութեանը համար, հապա խղճմտանքի համար ալ: 6 Այս պատճառաւ է որ տուրք ալ կու տայք. վասն զի Աստուծոյ սպասաւորներն են այն նոյն բանին հոգ տանելու: 7 Ուստի հատուցանեցէ՛ք պետք եղածը անոնց: Որո՛ւ որ տուրք տրուելու է՝ տուրքը, որո՛ւ որ մաքս՝ մաքսը, որո՛ւ որ վախ՝ վախնալը, որո՛ւ որ պատիւ՝ պատիւը:

ԻՐԱՐՈՒ ՀԱՆԴԵՊ ՍԵՐ

8 Բնա՛ւ մէկուն պարտական մի՛ գտնուիք, միայն մէկզմէկ սիրելու. Վասն զի ո՛վ որ ընկերը կը սիրէ՝ օրէնքը կը կատարէ. 9 Վասն զի այն Մի՛ շնարը, Մի՛ սպանները, Մի՛ գողնարը, Սուտ վկայութիւն մի՛ ըները, Մի՛ ցանկարը եւ ուրիշ ինչ պատուէր որ կայ՝ բոլորը այս խօսքին մեջ կը բովանդակուի. «Զու ընկերդ սիրես քու անձիդ պէս»: 10 Սէրը ընկերին գէշութիւն չ'ըներ. Ուրեմն օրէնքին լրումը սերն է:

ՅԻՍՈՒՄ ԶՐԻԱՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՄԱՏԹԵՆՈՍԻ 5.17-48

ՈՒՍՈՒՑՈՒՄ ՕՐԷՆՔԻ ՇՈՒՐՁ

17 «Մի՛ կարծեք թե ես եկայ օրենքը կամ մարգարեները արելու: Արելու չեկայ, հապա՛ կատարելու: 18 Քանզի ճշմարտապես կ'ըսեմ ձեզի, 'Մինչեւ երկինք ու երկիր անցնին, օրենքէն յովտ մը կամ նշանագիր մը պիտի չանցնի, մինչեւ բոլորն ալ կատարուին': 19 Ուստի ով որ այս ամենափոքր պատուիրանքներէն մէկը արեւ ու մարդոց այնպէս սորվեցնէ, անիկա ամենափոքր պիտի կոչուի երկնքի թագաւորութեանը մէջ. բայց ով որ ընէ եւ սորվեցնէ, անիկա մեծ պիտի կոչուի երկնքի թագաւորութեանը մէջ: 20 Քանզի կ'ըսեմ ձեզի, Եթէ ձեր արդարութիւնը դպիրներուն ու փարիսեցիներուն արդարութենէն աւելի չըլլայ, բնաւ պիտի չմտնէք երկնքի թագաւորութիւնը»:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԲԱՐԿՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՁ

21 «Լսեր էք որ ըսուեցաւ առաջիններուն, 'Սպանութիւն մի՛ ըներ: Ով որ սպանութիւն ընէ, դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ': 22 Բայց ես ձեզի կ'ըսեմ. 'Ով որ իր եղբօրը պարապ տեղը սրդողի, դատաստանի պարտաւոր պիտի ըլլայ: Ով որ իր եղբօրը Յիմար ըսէ, ատեանին պարտաւոր պիտի ըլլայ: Ով որ իր եղբօրը վնասի ըսէ, գեղենի կրակին պարտաւոր պիտի ըլլայ': 23 Ուրեմն եթէ քու ընծադ սեղանին վրայ բերես ու հոն միտքդ գայ թէ քու եղբայրդ քեզի դէմ բան մը ունի, 24 Հոն ձգէ ընծադ սեղանին առջեւ, գնա առաջ եղբօրդ հետ հաշտուէ ու ետքը եկուր որ քու ընծադ մատուցանես: 25 Քու ոտխիդ հետ շուտով միաբանէ, քանի որ անոր հետ ճամբուն մէջ ես: Չըլլայ թէ քու ոտխդ քեզ դատաւորին մատնէ եւ դատաւորը դահիճին եւ բանտը ձգուիս: 26 ճշմարիտ կ'ըսեմ քեզի, 'Պիտի չելլես անկէ՝ մինչեւ որ վերջին նաքարակիտը չվճարես'»:

ՈՒՍՈՒՑՈՒՄ ՇՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

27 «Լսեր էք որ ըսուեցաւ, 'Շնութիւն մի՛ ըներ', 28 Բայց ես ձեզի կ'ըսեմ. 'Ով որ կին մարդու կը նայի անոր ցանկալու համար, ալ անիկա իր սրտին մէջ շնութիւն ըրաւ անոր հետ': 29 Արդ եթէ քու աջ աչքդ քեզ կը գայթակղեցնէ, հանէ զանիկա ու քեզմէ ձգէ. վասն զի աղէկ է քեզի որ անդամներեդ մէկը կորսուի, բայց քու բոլոր մարմինդ դժոխքը չձգուի: 30 Եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակղեցնէ, կտրէ զանիկա ու քեզմէ ձգէ. վասն զի աղէկ է քեզի որ անդամներեդ մէկը կորսուի ու քու բոլոր մարմինդ դժոխքը չձգուի»:

ՌԻՍՈՒՑՈՒՄ ԱՊԱՅԱՐՉԱՆԻ ՄԱՍԻՆ

31 «Իրաւ, ըսուեցաւ թէ 'Ով որ իր կինը կ'արձակէ, թող անոր արձակման թուղթ տայ'։ 32 Բայց ես ձեզի կ'ըսեմ. 'Ով որ իր կինը արձակէ, առանց պոռնկութեան պատճառի, ինք պատճառ կ'ըլլայ անոր շնութիւն ընելուն եւ ով որ այն արձակուածը առնէ, շնութիւն կը գործէ'»:

ՌԻՍՈՒՑՈՒՄ ԵՐԴՈՒՄԻ ՇՈՒՐՁ

33 «Դարձեալ լսեր էք որ ըսուեցաւ առաջիններուն, 'Սուտ երդում մի՛ ըներ, հապա ըրած երդումներդ վճարէ Տէրոջը': 34 Բայց ես ձեզի կ'ըսեմ. 'Ամենեկին երդում մի՛ ընէք, ո՛չ երկկէի վրայ՝ որ Աստուծոյ աթոռն է 35 եւ ո՛չ ալ երկրի վրայ՝ որ անոր ոտքերուն պատուանդանն է, ո՛չ ալ Երուսաղէմի վրայ՝ որ մեծ Թագաւորին քաղաքն է, 36 Ոչ ալ քու գլխուդ վրայ երդում ընես, վասն զի չես կրնար մէկ մազ ճերմկցնել կամ սեւցնել: 37 Հապա ձեր խօսքը ըլլայ այոն՝ այո, եւ ոչը՝ ոչ. ու ասկէ աւելին չարէն յառաջ կու գայ՝»:

ՌԻՍՈՒՑՈՒՄ ՎՐԵԺԻ ՇՈՒՐՁ

38 «Լսեր էք որ ըսուեցաւ. 'Աչքի տեղ՝ աչք ու ակռայի տեղ՝ ակռայ': 39 Բայց ես ձեզի կ'ըսեմ. 'Չարին հակառակ մի՛ կենար, հապա եթէ մէկը ապտակ մը զարնէ աջ ծնօտիդ, դարձուր անոր միւսն ալ: 40 Եթէ մէկը ուզէ քեզի հետ դատ վարել ու քու շապիկդ առնել, թող տուր անոր քու վերարկուդ ալ: 41 Եւ ով որ քեզ պահակ բռնէ ու մղոն մը ճամբայ քշէ, գնա՛ անոր հետ երկու: 42 Քեզմէ ուզողին տուր ու երես մի՛ դարձներ անկէ՝ որ կ'ուզէ քեզմէ փոխ առնել՝»:

ԹՅՆԱՄԻՆԵՐԸ ՍԻՐԵԼ

43 «Լսեր էք որ ըսուեցաւ. 'Քու ընկերդ սիրես ու թշնամիդ ատես': 44 Բայց ես ձեզի կ'ըսեմ. 'Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անհծողները, բարիք ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն եւ աղօթք ըրէք անոնց համար որ ձեզ կը չարչարեն ու կը հալածեն. 45 Որպէս զի ձեր երկնաւոր Յօրը որդիներն ըլլաք. վասն զի իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը դրկէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ: 46 Վասն զի եթէ դուք ձեզ սիրողները սիրէք, ի՞նչ առաւելութիւն կ'ունենաք. չէ՞ որ մաքսաւորներն ալ նոյնը կ'ընեն: 47 Եւ եթէ միայն ձեր եղբայրներուն բարեւ տաք, ի՞նչ աւելի կ'ընէք ուրիշներէն. չէ՞ որ մաքսաւորներն ալ նոյնը կ'ընեն: 48 Ուրեմն դուք կատարեալ եղէք, ինչպէս ձեր երկնաւոր Հայրն ալ կատարեալ է՝»:

Romains 12.1-13.10

Je vous exhorte donc, mes frères, par les compassions de Dieu, que vous offriez vos corps en sacrifice vivant, saint, agréable à Dieu, ce qui est votre raisonnable service. Et ne vous conformez point à ce présent siècle, mais soyez transformés par le renouvellement de votre entendement, afin que vous éprouviez quelle est la volonté de Dieu, bonne, agréable, et parfaite. Or par la grâce qui m'est donnée je dis à chacun d'entre vous, que nul ne présume d'être plus sage qu'il ne faut; mais que chacun pense modestement de soi-même, selon que Dieu a départi à chacun la mesure de la foi. Car comme nous avons plusieurs membres en un seul corps, et que tous les membres n'ont pas une même fonction; Ainsi [nous qui sommes] plusieurs, sommes un seul corps en Christ; et chacun réciproquement les membres l'un de l'autre. Or ayant des dons différents, selon la grâce qui nous est donnée : soit de prophétie, [prophétisons] selon l'analogie de la foi; Soit de ministère, [appliquons-nous] au ministère; soit que quelqu'un soit appelé à enseigner, qu'il enseigne. Soit que quelqu'un se trouve appelé à exhorter, qu'il exhorte; soit que quelqu'un distribue, [qu'il le fasse] en simplicité; soit que quelqu'un préside, [qu'il le fasse] soigneusement; soit que quelqu'un exerce la miséricorde, [qu'il le fasse] joyeusement. Que la charité [soit] sincère. Ayez en horreur le mal, vous tenant collés au bien. Etant portés par la charité fraternelle à vous aimer mutuellement; vous prévenant l'un l'autre par honneur. N'étant point paresseux à vous employer pour autrui; étant fervents d'esprit; servant le Seigneur. Soyez joyeux dans l'espérance; patients dans la tribulation; persévérants dans l'oraison. Communiquant aux nécessités des Saints; exerçant l'hospitalité.

Que toute personne soit soumise aux Puissances supérieures : car il n'y a point de Puissance qui ne vienne de Dieu, et les Puissances qui subsistent, sont ordonnées de Dieu. C'est pourquoi celui qui résiste à la Puissance, résiste à l'ordonnance de Dieu; et ceux qui y résistent, feront venir la condamnation sur eux-mêmes. Car les Princes ne sont point à craindre pour de bonnes actions, mais pour de mauvaises. Or veux-tu ne point craindre la Puissance? fais bien, et tu en recevras de la louange. Car [le Prince] est le serviteur de Dieu pour ton bien; mais si tu fais le mal, crains; parce qu'il ne porte point vainement l'épée, car il est le serviteur de Dieu, ordonné pour faire justice en punissant celui qui fait le mal. C'est pourquoi il faut être soumis, non seulement à cause de la punition, mais aussi à cause de la conscience. Car c'est aussi pour cela que vous [leur] payez les

tributs, parce qu'ils sont les ministres de Dieu, s'employant à rendre la justice. Rendez donc à tous ce qui leur est dû : à qui le tribut, le tribut; à qui le péage, le péage; à qui crainte, la crainte; à qui honneur, l'honneur.

Ne devez rien à personne, sinon que vous vous aimiez l'un l'autre; car celui qui aime les autres, a accompli la Loi. Parce que ce [qui est dit] : Tu ne commettras point adultère, Tu ne tueras point, Tu ne déroberas point, Tu ne diras point de faux témoignage, Tu ne convoiteras point, et tel autre commandement, est sommairement compris dans cette parole : Tu aimeras ton Prochain comme toi-même. La charité ne fait point de mal au Prochain : l'accomplissement donc de la Loi, c'est la charité.

Matthieu 5.17-48

Ne croyez pas que je sois venu anéantir la Loi, ou les Prophètes; je ne suis pas venu les anéantir, mais les accomplir. Car je vous dis en vérité, que jusqu'à ce que le ciel et la terre soient passés, un seul iota, ou un seul trait de lettre ne passera point, que toutes choses ne soient faites. Celui donc qui aura violé l'un de ces petits commandements, et qui aura enseigné ainsi les hommes, sera tenu le plus petit au Royaume des cieux; mais celui qui les aura faits et enseignés, sera tenu grand au Royaume des cieux.

Car je vous dis que si votre justice ne surpasse celle des Scribes et des Pharisiens, vous n'entrerez point dans le Royaume des cieux.

Vous avez entendu qu'il a été dit aux Anciens : Tu ne tueras point; et qui tuera, sera punissable par le jugement. Mais moi je vous dis : que quiconque se met en colère sans cause contre son frère, sera punissable par le jugement; et celui qui dira à son frère, Racha, sera punissable par le conseil; et celui qui lui dira, fou, sera punissable par la géhenne du feu. Si donc tu apportes ton offrande à l'autel, et que là il te souvienne que ton frère a quelque chose contre toi; Laisse-là ton offrande devant l'autel, et va te réconcilier premièrement avec ton frère, puis viens, et offre ton offrande. Sois bientôt d'accord avec ta partie adverse, tandis que tu es en chemin avec elle; de peur que ta partie adverse ne te livre au juge, et que le juge ne te livre au sergent, et que tu ne sois mis en prison. En vérité, je te dis, que tu ne sortiras point de là, jusqu'à ce que tu aies payé le dernier quadrin.

Vous avez entendu qu'il a été dit aux Anciens : Tu ne commettras point adultère. Mais moi je vous dis, que quiconque

regarde une femme pour la convoiter, il a déjà commis dans son cœur un adultère avec elle. Que si ton œil droit te fait broncher, arrache-le, et le jette loin de toi; car il vaut mieux qu'un de tes membres périsse, que si tout ton corps était jeté dans la géhenne. Et si ta main droite te fait broncher, coupe-la, et la jette loin de toi; car il vaut mieux qu'un de tes membres périsse, que si tout ton corps était jeté dans la géhenne.

Il a été dit encore : si quelqu'un répudie sa femme, qu'il lui donne la Lettre de divorce. Mais moi je vous dis, que quiconque aura répudié sa femme, si ce n'est pour cause d'adultère, il la fait devenir adultère; et quiconque se mariera à la femme répudiée, commet un adultère.

Vous avez aussi appris qu'il a été dit aux Anciens : tu ne te parjureras point, mais tu rendras au Seigneur ce que tu auras promis par jurement. Mais moi, je vous dis : ne jurez en aucune manière; ni par le ciel, car c'est le trône de Dieu; Ni par la terre, car c'est le marchepied de ses pieds; ni par Jérusalem, parce que c'est la ville du grand Roi. Tu ne jureras point non plus par ta tête; car tu ne peux faire un cheveu blanc ou noir. Mais que votre parole soit : oui, oui; non, non; car ce qui est de plus, est mauvais.

Vous avez appris qu'il a été dit : œil pour œil, et dent pour dent. Mais moi, je vous dis : ne résistez point au mal; mais si quelqu'un te frappe à ta joue droite, présente-lui aussi l'autre. Et si quelqu'un veut plaider contre toi, et t'ôter ta robe, laisse-lui encore le manteau. Et si quelqu'un te veut contraindre d'aller avec lui une lieue, vas-en deux. Donne à celui qui te demande, et ne te détourne point de celui qui veut emprunter de toi.

Vous avez appris qu'il a été dit : tu aimeras ton prochain, et tu haïras ton ennemi. Mais moi je vous dis : aimez vos ennemis, et bénissez ceux qui vous maudissent, faites du bien à ceux qui vous haïssent, et priez pour ceux qui vous courent sus, et vous persécutent. Afin que vous soyez les enfants de votre Père qui est aux cieux; car il fait lever son soleil sur les méchants, et sur les gens de bien, et il envoie sa pluie sur les justes, et sur les injustes. Car si vous aimez [seulement] ceux qui vous aiment, quelle récompense en aurez-vous? Les péagers mêmes n'en font-ils pas tout autant? Et si vous faites accueil seulement à vos frères, que faites-vous plus [que les autres]? les péagers mêmes ne le font-ils pas aussi? Soyez donc parfaits, comme votre Père qui est aux cieux est parfait.

ՄԵԾ ՊԱՅՔԸ ԺՈՒԺԿԱԼՈՒԹԵԱՆ, ՉՍՊՈՒՄԻ ՇՐՋԱՆ

Յարգելի հաւատացեալ քոյրեր եւ եղբայրներ, ահաւասիկ Մեծ Պահոց ճանապարհորդութեան երկրորդ հանգրուանին հասած ենք, որ կը կոչուի Արտաքսման Կիրակի :

Այս Կիրակի օրուան առաջարկուելիք դարմանը՝ մեծագոյն աշխատանքն է հպարտութեան եւ ամբարտաւանութեան մեղքերուն դէմ:

Սակայն Մեծ Պահոց շրջանին ժուժկալութիւնը եւ ինքնագսպումը, ինքնասանձումը՝ մարդ էակին տրուած յատուկ կարողութիւն եւ առաքինութիւն մըն են, որոնք կրնան լաւագոյնս օգտակար ըլլալ աստուածային պատկերին վերականգնումի սուրբ գործին: Արդարեւ յաճախ կը կրկնենք՝ մարդս միւս էակներէն զատող ամենակարեւոր յատկութիւնը, անոր բանական էակ մը ըլլալն է, այսինքն խորհող, մտածող, դատող եւ որոշող էակ մը, որ կը պակսի միւս բոլոր էակներէն:

Անասուն-անբան կենդանի էակները բնագոյով կը շարժին, մա՛րդն է, որ բանականութեամբ՝ անկախ ու ազատ կը շարժի: Եւ ահաւասիկ, հո՛ս է տարբերութիւնը՝ բանաւոր էակին եւ անբան-անասուն կենդանիին: Եւ մարդ, որքան որ կ'անդրադառնայ իր բանականութեան, այնքան «մա՛րդ» է: Այս իմաստով, ժուժկալութիւն, ինքնագսպում եւ ինքնասանձում կը նշանակէ ինքզինք ճանչնալ, անդրադառնալ իր իսկ գոյութեան, կշռել, դատել եւ ըստ այնմ որոշում տալ: Տրուած որոշումը նպաստաւոր, ճիշդ, աննպաստ կամ սխալ, այդքան կարեւոր չէ՛, քանի որ էականը որոշում մը կարենալ տա՛լն է: Որոշում տալ՝ մարդուն տրուած յատուկ կարողութիւն մըն է, իսկ անոր սխալ կամ ճիշդ ըլլալուն հարցը որոշում տուողին պատասխանատուութեան տակն է եւ եթէ սխալ է՝ ենթական կը տուժէ եւ կը հատուցանէ, իսկ եթէ ճիշդ է կ'օգտագործէ եւ կը վայելէ իր որոշումին արդիւնքը: Այս իրողութիւնը կը սահմանուի «ազատ կամք»-ի սկզբունքով:

Եւ ահաւասիկ, սիրելի՛ քրիստոսակիր բարեկամներ, երբ կը գտնուինք Մեծ Պահոցի շրջանին մէջ, այս անդրադարձումի առիթ մըն է մեր ուժերուն, բարոյական եւ մտային կարողութեան եւ հոգեւոր զօրութեան: Պահքը,

ուրեմն իր ընդհանուր էութեամբ կը նշմարուի ուտելու-խմելու ժուժկալութեան եւ մարմնական սանձումներու մէջ, հոգեպէս բարձրանալու համար: Ուստի պահքը վարժութիւն մըն է՝ որ հոգին կը կանոնաւորէ, կը կարգաւորէ, «տիսիփիլին»-ի կ'ենթարկէ: Եւ ինչպէս մարմինը զարգանալու համար պէտք ունի շարժումի, մարզանքի եւ վարժութեան, նոյնպէս հոգին ալ աճելու համար պէտք ունի վարժութեան՝ որ կ'իրականանայ պահքով՝ իր լայն առումով:

Ժուժկալութիւնը, ինքնագսպումը, հոգեկան տոկունութիւնը առարկաներն են պահքին, այսինքն հոգեւոր մարզանքի եւ վարժութեան:

Այսօր պահքը ընդհանրապէս յետադիմութիւն կամ խաւարամտութիւն կը համարուի, բայց պէտք է պահքին նայիլ անգամ մըն ալ դրական տեսանկիւնէն եւ պիտի տեսնուի, որ անշուշտ եթէ տեսնել ուզէ դիտողը, ան միայն ձեւակերպութիւն մը, ձեւապաշտութիւն մը չէ՛, այլ մարդուն բանականութիւնը բացայայտող կարեւոր եւ մանաւանդ օգտակար արարք մը: Անշուշտ, որ ամէն լուսամիտ եւ ողջախոհ միտք հակառակ է ձեւապաշտութեան, եւ ուրեմն հակառակ է անգիտակից, մեքենաբար եւ կոյրգկուրայն կատարուած ամէն արարքի, ինչ որ ալ ըլլայ անոնց նպատակը եւ նաեւ նոյն կերպով՝ առանց իմաստին թափանցելու կատարուած պահեցողութեան կամ ծոմապահութեան: Ուրեմն պահքը կարելի է նմանցնել աշխատասեր մարդու մը՝ պահ մը աշխատութենէ դադրելուն, հանգիստ ընելու պահանջքը ունենալուն: Աշխատասեր մարդ մը երբ պահ մը դադրի աշխատելէ, կարելի՞ է զայն ծուլութեամբ ամբաստանել եւ «ծոյլ» որակել...:

Ուրեմն պահքի շրջանին ալ փորձենք այս մտադրութեամբ մօտենալ՝ ո՛չ թէ ձեւապաշտութիւն մը, այլ պահանջք մը, մարդ ըլլալու, մարդ ըլլալուն անդրադառնալու, հոգեւոր կարողութիւններուն գոյութիւնը հասկնալու եւ մա՛րդ մնալու առիթ մը, բարեպատեհ շրջան մը, բացատրագիր մը՝ առողջ «հոգեւոր կեանք» մը վարելու..., ինչպէս հիմա այնպէս եւ վաղն յաւիտեանս յաւիտենից. ամէն :

Armenian Lenten Services

The Peace Service, Rest Service and Sunrise Service are performed more often during Great Lent than at other times of the year.

(Usually, Peace and Rest Services are performed only on Friday evenings.)

These three services are part of the Church's cycle of seven daily worship services but are of significance during Great Lent because they are penitential in nature and remind us of the effort we are making to restore our pure and joyous relationship with God.

The evening Peace Service consists of prayers for peace to end each day. These prayers remind us that God is with us even in the face of trial and temptation.

The Rest Service, which comes just before retiring for the night, asks God's continuing care through the night. It includes the prayer of St. Nerses.

The Sunrise Service, performed first thing in the morning, reminds us that God is the giver of the light of morning and the light of salvation.

Its beautiful prayers and hymns reflect the fresh and serene quality of the most beautiful time of day.

ՏՈՆԵՐ

Շաբաթ, 20 Փետրուար 2021

Սուրբ Թեոդորոս Չորավարի Յիշատակութեան Օր

Ս. Թեոդորոս Չորավարը համաքրիստո-նեական սուրբ է, որուն յիշատակութիւնը Հայ Առաքելական եկեղեցին կը տօնէ Մեծ Պահօք առաջին շաբաթ օրը: Ըստ վարքագիրներուն՝ ան ծնած էր Ամասիա քաղաքի Սարու գիւղին մէջ եւ ունեցեր էր Քրիստոնեայ բարեպաշտ ծնողներ:

4-րդ դարու սկզբին, Դիոկղետիանոսի հալածանքներու ժամանակ, ապացուցելու համար կուռքերու հնարովի եւ կեղծ ըլլալը, գիշերով կրակի կը մատնէ հեթանոսական Ռեա չաստուածուհիին մեհեանը: Այս արարքին համար բանտ նետուած է եւ մեծագոյն



չարչարանքներէն յետոյ 306 թուականին կը նահատակուի՝
այրուելով կրակի վրայ:

Ս. Թեոդորոս զօրավարը յայտնի է նաեւ, որպէս վիշապասպան, որ
քաջութեամբ ու հաւատքով կը յաղթէ հսկայ վիշապի:

Օտար եկեղեցիներուն մէջ յայտնի է նաեւ «Դիոն» անուանումով,
որ Յունարէն կը նշանակէ «նորեկ» գիւնուոր:

Կիրակի, 21 Փետրուար 2021

Արտաքսման Կիրակի

Մեծ Պահքի երկրորդ Կիրակին կը
կոչուի նաեւ Արտաքսման: Օրուայ
խորհուրդին եւ անուան մասին
Աստուածաշունչ մատենակի
Ծննդոց Գիրքին մէջ գրուած է.

«...Եւ արտաքսեց անոր Աստուած
Եդէմի պար-տեզէն, որպէսզի
մշակէ հողը, որմէ եւ ստեղծուած

Էր»: (Ծննդ. 3:23): Նախապատմութիւնը հետեւեալն է. մարդը

ունկնդիր ըլլալով Սատանայի խաբէբայական խօսքերուն,

պատուիրանազանց գտնուելով՝ համտեսեց արգիլուած պտուղէն:

Որպէս պատիժ, մարդը ի հարկէ, անմիջապէս չմահացաւ, սակայն

զրկուեցաւ Աստուծոյ կողմէ շնորհուած անմահութենէն եւ

անիծուեցաւ: Այսուհետեւ, մարդը իր քրտինքով պէտք է վաստակի

օրուայ հացը եւ կինը պէտք է ցաւով ու տառապանքով զաւակ

ունենայ եւ վերջն ալ ըսուած է անոր . «...հող Էիր եւ հող կը դառնաս»
(Ծննդ.3.19):

Եկեղեցական հայրերը իմաստուն կերպով Զոռասնորդաց Պահքի

շրջանի Կիրակիները այնպէս դասաւորած են եւ այնպիսի

անուանումներ ու խորհուրդներ տուած, որոնցմով ի յայտ կու գայ

մարդկութեան կեանքի ուղին՝ ծնունդ, մեղսագործութիւն, զոջում,

ապաշխարանք: Սա ինքնին մարդուն խորհելու եւս մէկ առիթ է

սեփական անձին անդրադառնալու, պահոց շրջանը արդիւնաւետ

անցնելու համար:



Holidays

Saturday, February 20, 2021:

Commemoration of St. Theodoros the Captain

St. Theodoros the Captain is a Saint recognized by all traditional churches of Christendom. The Armenian Church commemorates this Saint on the first Saturday during the period of Great Lent.



According to hagiographers, St. Theodoros was born to God-fearing

and pious parents in the village of Saroo, near the town of Amasia. He was a soldier in the Roman Army, and rose through the ranks, eventually becoming a Captain.

In the beginning of the fourth century, Rome was under the rule of the Emperor Diocletian. Instead of worshipping at the temple of the pagan goddess Rea, as he had been instructed to, St. Theodoros burns the temple to the ground, thus demonstrating that pagan idols were false. For this act, Diocletian imprisons St. Theodoros, and he suffers severe tortures. In the year 306 A.D., he is martyred by being set on fire.

St. Theodoros is also known as the “Slayer of the Dragon”, as he was said to have defeated a great and mighty dragon due to his courage and faith.

Sunday, February 21, 2021

Sunday of Expulsion

The second Sunday of the period of Great lent is called the Sunday of Expulsion. The basis of the mystery of and the name of the day can be found in the Holy Bible, the Book of Genesis: “So the Lord God sent him out of the Garden of Eden and made him cultivate the soil from which he had been formed” (Genesis 3:23). Prehistory is the following. The human being, listening to the deceitful words of Satan, disobeyed the divine commandments and ate the forbidden fruit, As punishment the human being, the human being, of course, didn’t die at once, but was deprived of the eternity granted by God and was cursed Since then man must work hard and sweat to make the soil produce enough food, and woman will have pain in giving birth to her offspring. And in end God

said to the human being: “You were made from soil and you will become soil again” (Genesis 3:19).

The church Fathers have given the Sundays of the Period of great lent such names and mysteries which symbolize the mankind’s way of life – birth, sinning, regret and repentance. This should serve for the human being as an occasion for thinking of himself/herself and his/her lifer so that the period of great Lent should be fruitful and productive.



Հայկական Պահքի Խոհանոց / Lenten Kitchen

ARMENIAN VEGETARIAN DOLMA

DOLMA DOLI LITSK ԼԻՏՔ

- 2 cups of coarse wheat (or rice)
- 2 onions
- 1 clove of garlic
- 2 green bell peppers
- 3 tomatoes
- 2 tablespoons of tomato/pepper sauce
- ½ cup of vegetable oil
- Ground red and black pepper
- Sumac
- Ground mint
- Salt
- Grape leaves, eggplants, and bell peppers



Chop the vegetables, namely the tomatoes, bell pepper, onions, and garlic, and then fry them lightly in a pan. Add the wheat and tomato/pepper sauce, and season. Wrap in the grape leaves, and place the grape leaves in hollow eggplants and peppers. Arrange in a pot, add enough water to cover the dolmas, place a tray over the pot, and cook until all of the water is absorbed. Allow the dolmas to cool, then remove from the pot, before they collapse. A cup of chopped walnuts may be added to the stuffing, if so desired.

" CARROT & BEET SALAD "

INGREDIENTS:

- 3 medium carrots, peeled and diced
- 3 medium beets, peeled and diced
- Small bunch cilantro, washed and finely chopped
- 1 T lemon juice
- 1/4 cup rice wine vinegar
- 1/4 cup olive oil
- 1/2 t. ground cumin
- Salt and coarse-grind black pepper



PREPARATION:

Steam carrots and beets until tender, about 10 minutes. Allow to cool, then place in bowl. Add cilantro.

Make dressing by combining the remaining ingredients, then pour into bowl and allow to marinate in the refrigerator for at least an hour before serving.

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԻՆ ԵԿԵՂԵՑՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

**Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC Donations
of February 2021 have been received with great appreciation!**

CHURCH:

Garderie Educative Mini Panda \$200

CALENDAR SPONSORSHIP:

Fondation Bolsahay \$250

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE ROSA BENOHANIAN:

Mrs. Chake Gunjian \$1000

THE LATE OHANNES COSKUN:

Mr. & Mrs. Jeffrey & Ani Tchaderjian \$200

Mrs. Verkin Gochian \$200

Mr. & Mrs. Berc Meneyan \$100

Mr. Nicholas Meneyan \$100

Mr. Alen Gulyan \$100

Mr. & Mrs. Alain & Arshalouise Tchaderjian \$100

Mr. & Mrs. Migir & Janet Koseyan \$100

Mr. & Mrs. Koko & Agavni Chulfayan \$100

Mr. Ari Bagdasaryan \$100

Mr. & Mrs. Dave & Jeanette Meneyan \$50

THE LATE BAGDIK AGOPYAN:

Mrs. Susanik Agopyan \$500

Mr. & Mrs. Jirayr Agopyan \$500

Mr. & Mrs. Hayk & Talin Bosnakyan & the children \$500

Mr. & Mrs. Arsen & Seta Bosnakyan \$300

Mr. Arshak. Markaryan \$200

Dr. Arto Demirjian \$200

Mr. Shahan Markaryan \$200

Mr. Vace Kondakci \$125

Miss Diane Baygin \$100

Mr. & Mrs. Krikor & Armined Kanar \$100

Ms Beatrice Hekimoglu \$100

Mr. & Mrs. Emille & Sella Kutlu \$100

Mrs. Ojeni Sahbaz \$100

Mr. Mardiros Baygin \$100
Mrs. Nadya Sukyas \$100
Mr. & Mrs. Mihran Cicek \$100
Mr. & Mrs. Arman Oduncuoglu \$100
Mr. & Mrs. Murat & Anahit Demirdogen \$50
Mr. & Mrs. Arman & Tamar Komurcuoglu \$50
Mrs. Sylva Ferah \$50
Mr. & Mrs. Arsen & Ayda Unlusoy \$50
Mr. & Mrs. Krikor & Yeran Arslan \$50

THE LATE PARANSEM OZTASH:

Mr. & Mrs. Krikor & Armine Kanar \$50

THE LATE HRANT TOZLUYAN:

Mrs. Pergruhi Meremetci \$50

THE LATE GARO-FERDI KAHRAMAN:

Mekhgeavakian Family \$500
Mrs. Sylva Ferah \$50

HOKEHANKISD:

THE LATE SAGLAM & SIMSEK FAMILIES:

Mr. Apraham Saglam \$100

THE LATE VAHAN TOUKHIAN:

Mr. Vrej Toukhian \$20

TZNOUNT YOUGHAKIN:

Mr. & Mrs. Krikor & Yeran Arslan \$50



ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԿԻՐԱԿԻ, 21 ՓԵՏՐՈՒՄ 2021

REQUIEM DIMANCHE, LE 21 FEVRIER 2021



Առաջնորդ Սրբազան Հոր թելադրութեամբ՝ հոգեւոր
հովիւին, ծխական խորհուրդին եւ յարակից
մարմիններուն խնդրանքով հոգեհանգստեան
պաշտօն պիտի կատարուի,
33 տարի առաջ Սոււկայիթի
եւ Ատրրպէյճանի հայաբնակ այլ վայրերուն մէջ
գազանաբարոյ ջարդերուն զոհ գացած
հայորդիներու
հոգիներուն ի հանգիստ:



Պետիկեան եւ Անթիքաճեան ընտանիքներու,
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին՝
ՍԵՂԱ ՊԵՏԻԿԵԱՆԻ
(SETA BEDIKYAN)
Մահուան 2-րդ տարելիցին առիթով:



Տէվլէթեան եւ Կուտսուզ ընտանիքներու,
խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր, եղբօր
եւ հարազատին՝
ՆՇԱՆ ՏԵՎԼԵԹԵԱՆԻ
(NISAN DEVLETYAN)
Մահուան 40-ին առիթով:
իրենց սիրեցեալ հարազատներուն՝
ԷՖԳԱՐԻՍ ԵՒ ԿԱՐՎՊԵՏ ՇԱՄԱՆԵԱՆԻ
(EFKARIS & GARABED SHAMANIAN)
ԱՏԷԼ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՍՈՒԳԻԱՍԵԱՆԻ
(ADEL & KRİKOR SOUKIASSIN)

ԵՐՋԱՆԻԿ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ ՍՈՒԳԻԱՍԵԱՆԻ
(YERCHANIK & SAMUEL SOUKIASSIAN)
ՄԱՐԻ ՍՈՒԳԻԱՍԵԱՆԻ
(MARIE SOUKIASSIAN)
ՇԱԶԷ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՏԵՎԼԵԹԵԱՆԻ
(CHAKE & KRİKOR DEVLETYAN)
ՄԱՐԻԱՄ ԵՒ ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆԱՍԻ
(MARYAM & YERVANT MANAS)
ԷԼԻԶ ՄԱՆԱՍԻ
(ELIZE MANAS)
ԱՐՔԻՆԷ ԵՒ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿՈՒՏՈՒԶԻ
(ARPINE & HARUTYUN GUDSUZ)
հոգիներուն ի հանգիստ:



Շամլեան ընտանիքի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ հօր եւ մեծ հօր՝
ԱՐԹՒՐ ՇԱՄԼԵԱՆԻ
(ARTHUR SHAMLIAN)
Մահուան 40-ին առիթով:



ՏԵՐԸ ՅԻՇԷ ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐԸ ԵՒ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՅՆԷ

ՅՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ԱՐՈԹՔ

Քրիստոս որդի Աստուծոյ անխակալ եւ բարեգութ,
գթա քո արարչական սիրովդ
ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց:
Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ:
Արա արժանի ողորմութեան քաւութեան
եւ թողութեան մեղաց:
Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո
յաջակողմեան դասուն:
Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.
դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:
Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամեն:



**ՄԵԾԻ ՊԱՅՈՑ ԶԱՌԱՍՏՕՐԵԱՅ ՇՐՋԱՆԻ ՀՍԿՈՒՄՆԵՐՈՒ
ՈՒՆՏԻ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ
ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ
ԱՄԷՆ ՉՈՐԵՔԵԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԸ 5:00-ին
17 Փետրուար – 1 Ապրիլ 2021**

Ուղիղ հեռարձակում / Diffusion en direct / Facebook Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

**Մ 17 Փետրուար – Զարոզիչ՝
Արժ. Տ. Դաւիթ Զինյ. Մարգարեան
Հոգեւոր Հովիւ**

**24 Փետրուար – Զարոզիչ՝
Արժ. Տ. Կոմիտաս Զինյ. Միրզախանեան**

**3 Մարտ – Զարոզիչ՝
Վերապատուելի Յովհաննէս Սվանեան**

**10 Մարտ – Զարոզիչ՝
Գերշ. Տ. Տ. Արգար Եպս. Յովակիմեան
Առաջնորդ Գանատահայոց Թմի**

**17 Մարտ – Զարոզիչ՝
Արժ. Տ. Գառնիկ Զինյ. Գոյունեան**

**24 Մարտ – Զարոզիչ՝
Գերապայծառ Տ. Գեորգ Ծ. Վրդ. Չապարեան**

**1 Ապրիլ – Աւագ Հինգշաբթի
Զարոզիչ՝ Արժ. Տ. Դաւիթ Զինյ. Մարգարեան**

**Հաւատացեալներ՝ որոնք կը փափաքին
հոգեհանգստեան պաշտօն խնդրել իրենց ննջեցեալ
հարազատներու յիշատակին համար, կրնան դիմել
Եկեղեցւոյ գրասենեակ՝ հեռաձայնելով
(514) 279-3066 թիվին:**

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

stgregorychurch@gmail.com  Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

 www.saintgregory.ca



Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Տաճար
Ուղիղ հեռարձակում /Diffusion en direct/ Facebook Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՊԱՅՈՑ ՇՐՋԱԼԻ
ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ
DURANT TOUTE LA PERIODE DU GRAND CARÊME
“AREVAKAL” LES PRIÈRES DE L’AUBE

Ամեն Ուրբաթ՝ սկսեալ
19 Փետրուար 2021-էն,
առաւօտեան ժամը 11-ին:
Tous les Vendredis à partir de
19 février 2021 à 11h00 heures.

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ մեր
ժողովուրդը
առցանց հետեւելու եւ հաղորդակից դառնալու
Եկեղեցւոյ դիմատետրի էջով - Facebook Live
Պահոց շրջանի Արեւագալի ժամերգութեան:
Nous invitons nos fidèles à nous suivre
en ligne à la page de l'église – Facebook Live:
Durant toute la Période du Grande Carême.

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 Tel.: (514) 279-3066 /

Fax: (514) 279-8008

stgregorychurch@gmail.com



ԱՄԵՆԱՄՏԵԱՅ ԵՐԵԿՈՅԵԱԿԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ

Ուղիղ հեռարձակում – En direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Շաբաթ, 27 Փետրուար 2021

Ժամերգութիւն - երեկոյեան ժամը՝ 5-ին:

**«Ուստի կը յայտարարեմ ձեզի. «Ի՛նչ որ կը խնդրէք աղօթքով,
հաւատացէ՛ք թէ պիտի ստանաք, ու պիտի ըլլայ ձեզի»
(Ղուկ. 11:24):**

Samedi, le 27 Février 2021

Office du soir à 17h00.

**“C'est pourquoi je vous dis : tout ce que vous demandez en priant,
croyez que vous le recevrez, et il vous sera fait”
(Marc 11 :24).**



ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ

Մեր հաւատացեալներուն կը յայտնենք, թէ համաձայն Քէպէք նահանգի իշխանութեան, առողջապահական կառոյցներու յայտարարութեան եւ Գանատահայոց Թեմի հրահանգներուն՝ կանխարգիլելու համար թագաժահրի Covid-19 տարածման վտանգը, **յետայսու որպէս ապահովութիւն, հաւատացեալներու ֆիզիքական ներկայութիւնը եկեղեցոյ մէջ արգիլուած է սկսեալ 9 Յունուարէն մինչեւ նոր տնօրինութիւն:**

- Յուղարկաւորութիւններու պարագային արտօնուած է մինչեւ 10 հոգիի ներկայութիւն, դիմակներու գործածութիւնը անհրաժեշտ է ամբողջ արարողութեան տեւողութեան ընթացքին:
 - Եկեղեցոյ Կիրակնօրեայ Ս. Պատարագներուն, ժամերգութիւններուն եւ մնացեալ արարողութիւններուն կարելի է հետեւիլ առցանց եկեղեցոյ դիմատետրի էջով – Facebook Live
- Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**
Մնացեալ հարցերու համար կրնաք դիմել Զոգեւոր Զովիլին, հեռ. (514) 448-2809:

Ձեզ կը մաղթենք առողջութիւն եւ ամենայն բարիք եւ յոյս կը յայտնենք, որ յառաջիկայի փոփոխութիւններու եւ այլ մանրամասնութիւններու պարագային գրաւոր ձեզ տեղեակ պահել:

ԵԿԵՂԵՑՈՅ ԳՐԱՍԵՆԵԱԿ

IMPORTANT NOTICE

We would like to inform our parishioners that in accordance with the Quebec State Authority, a statement from health care providers, and instructions from the Armenian Diocese of Canada to prevent the spread of Covid-19,

the physical presence of parishioners in the Church is now prohibited starting from January 9 until further notice.

- Up to 10 people are allowed in the case of funerals, the use of masks is required throughout the ceremony.
- Church Sunday Liturgies, prayer services, and other ceremonies can be followed online on the Church Profile page - Facebook Live

Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

For other questions, you can contact the Parish Priest tel. (514) 448-2809.
We wish you good health and all the best and hope to keep you informed in writing of any changes or other details.

CHURCH OFFICE



Note Importante

Nous vous informons chers croyants que conformément aux directives du gouvernement du Québec, après la déclaration des autorités de santé publique et des instructions du diocèse de l'Église apostolique arménienne au Canada, pour empêcher la propagation du virus de Covid-19, **la présence physique des fidèles dans l'Église est désormais interdite à partir de 9 Janvier jusqu'à.**

- Jusqu'à 10 personnes sont autorisées en cas de funérailles et le port de masques est obligatoire tout au long de la cérémonie.

• Les St liturgies de dimanche, services et d'autres cérémonies de l'église peuvent être suivis en ligne sur la page Facebook de l'Église.

 **Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal**
Pour toutes autres questions, vous pouvez
contacter le prêtre au tel: (514) 448-2809

Nous vous souhaitons surtout de bonne santé et le meilleur et espérons vous tenir informé par écrit de tout changement ou d'autres détails.

BUREAU DE L'ÉGLISE